Հաստատված է
Օտար լեզուների ֆակուլտետի խորհրդի
N 4 նիստում
30. 11.2020 թ.
_____ Ս. Լուլուկյան

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Շահակիցների կարիքների վերհանման և արտաքին շահակիցների կարիքների և պահանջների բացահայտման նպատակով ֆակուլտետը կիրառել է հետևյալ գործիքները և իրականացրել է հետևյալ աշխատանքները. հարցումներ և վերլուծություն՝ ուսանողության, ուսուցչական, դասախոսական կազմի մասնակցությամբ. քննարկումներն իրականացվել են՝ որպես հարթակ օգտագործելով ուսուցիչների և դասախոսների վերապատրաստման դասընթացները, ներամբիոնական և միջամբիոնական սեմինարները, քննարկումները ամբիոնի վարիչների և ուսանողական խորհրդի հետ, ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերը, ինչպես նաև առցանց Google հարթակը:
Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:
Ֆակուլտետի կողմից որդեգրված ռազմավարական քայլերի իրականացումը հիմնական (փաստացի դասավանդման/ուսումնառության գործընթացից զատ) ներառել է առանձին քննարկումներ ՈՒԽ նախագահի և անդամների, ամբիոնի վարիչների, ՊԴԱ անդամների հետ հանդիպում-քննարկումներ, առանձին կրթամշակութային միջոցառումներ՝ ներգրավելով ֆակուլտետում առկա ներուժը, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող միջազգային կազմակերպությունները և կառույցները՝ Բրիտանական խորհուրդ, ԱՄՆ դեսպանատուն, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատուն, Գերմանական Ակադեմիական փոխանակման ծառայություն, Գյոթե ինստիտուտ, Պուշկինի անվան ռուսաց լեզվի դասավանդման ինստիտուտ և այլն:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Ֆակուլտետը հաշվետու տարում դասախոսներին և ուսանողներին իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն է ընձեռել:
Ֆակուլտետում գործում են 4 ամբիոններ, որոնք իրականացնում են մասնագիտական կրթական ծրագրեր, օտար լեզուների ուսուցման և ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի, ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնները իրականացնում են նաև համահամալսարանական ուսուցում / անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն/:
Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է պլանավորում, մշտադիտարկել իր մեխանիզմներով:
Ֆակուլտետի առաքելությունը շարունակաբար գտնվել է ֆակուլտետի դեկանատի և ֆակուլտետի կազմում գործող ամբիոնների ուշադրության կենտրոնում: Դեկանատի կողմից իրականացվող մշտադիտարկումների հիմնական ձևաչափերն են՝ հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ և դասալսումներ, ինչպես նաև ուսուցման էլեկտրոնային հարթակում դասախոսների ակտիվության վերահսկողություն: Դեռևս ամբողջական չէ ուսանողների համակարգված ներգրավվածությունը ֆակուլտետում իրականացվող ծրագրերում և էլեկտրոնային հարթակում հարցումների իրականացման գործընթացում: Ծրագրվում է համակարգումն առավել ակտիվացնել ՈՒԽ-ի միջոցով:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները որքանով են համապատասխանում մասնագիտական որակավորմանը՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
ՄԿԾ-ները քննարկվել են ֆակուլտետի կազմում գործող ամբիոններում և ֆակուլտետի խորհրդի նիստերում: Հաշվետու ժամանակահատվածում եղել են ՄԿԾ-ների քննարկումներ՝ Կրթական գործընթացների բարելավման և որակի վարչության անմիջական մասնակցությամբ և վերահսկողությամբ: Արդյունքում իրականացվել են փոփոխություններ և ճշգրտումներ՝ առարկայացանկում, ինչպես նաև առարկաների ըստ կիսամյակների բաշխվածության մեջ: Ակնկալվում է, որ նման փոփոխությունները առավել դյուրին կդարձնեն մասնագիտական

առարկայախմբի առարկաների յուրացումը՝ հաշվի առնելով ուսանողների կիսամյակային ծանրաբեռնվածությունը և դրանց համադերլիությունը այլ առարկաների հետ:
Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:
Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը շարունակել է ուսումնասիրել դասավանդման/ուսումնառության արդյունավետության հնարավորությունները՝ էլեկտրոնային կրթության հարթակում, լսարանային և այլ ձևաչափերով: Մեծացել է դասավանդման և նյութերի մատուցման առցանց միջոցների տեսակարար կշիռը՝ Language Lab, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից կազմակերպված տարաբնույթ կոնֆերանսների, սեմինարների, հանդիպում քննարկումների միջոցով:
Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:
Ֆակուլտետում առանձնակի ուշադրության է արժանացել ակադեմիական ազնվության հարցը և դրա ապահովման նպատակով կիրառվել են գրագողության դեմ պայքարի առցանց և փաթեթային գործիքներ՝ Viper, Grammarly: Գրագողության և/կամ անհարկի գնահատման դեպքեր չեն հայտնաբերվել: Ինչևէ, քննարկման են ենթարկվել բոլոր ամբիոնների կողմից պատահականության սկզբունքով ընտրված աշխատանքներ և աշխատանքների գնահատման մեթոդներ: Քննարկումների արդյունքում դուրս են բերվել որոշ թերացումներ, որոնք, բարեբախտաբար, որևէ կերպ չեն անդրադարձել ուսանողների ակադեմիական առաջադիմության և շրջափոխումների վրա:
Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու, ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
ՄԿԾ-ների մասնագիտական առարկայախմբի առարկաները սահմանված են հետևյալ սկզբունքների համաձայն. - առարկաների աստիճանական բարդացումը, - լեզվի իմացության և լեզվի դասավանդման բոլոր մակարդակների և ասպեկտների ներառումը, - արդի լեզվամշակութային հաղորդակցական կարողությունների առկայությունը, - ներքին և արտաքին միջգիտակարգային կապերի առկայությունը: Ուսումնառության բովանդակությունը սահմանվում է բացառապես համաձայն եվրոպական չափանիշների՝ ուսումնառության հիմնական նյութերի, օժանդակ միջոցների, դասավանդման և գնահատման բաղադրիչների համապատասխան ընտրության միջոցով:
Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:
Շահակիցների կարիքների վերհանումը և արդի պահանջների ներառումը կրթական ծրագրում իրականացվում է դպրոցներ այցելությունների, վերապատրաստման դասընթացների, ներամբիոնական քննարկումների, սեմինարների միջոցով: Տվյալ փուլում ֆակուլտետը նպատակադրվել է ներառել նաև մասնագետներ արտերկրից՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և այլն ծրագրի, դրա բաղադրիչների և առանձին առարկաների վերլուծության և, հնարավորության դեպքում, վերանայման նպատակով:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:		
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	258
	հեռակա	173
Մագիստրոսի	առկա	72
	հեռակա	-
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով		
Ուսանողների արտահոսք		
Հաստատություն/երկիր		թիվ
1	հայտնի չէ / իր դիմումի համաձայն/	3 առկա/ 5հեռակա

Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Այլ բուհից /ԵՊՀ, ԲՊՀ/	2 հեռակա	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	0,8%	2
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	2%	10

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների հավաքագրումն իրականացվել է.

- համացանցի,
- վարպետաց դասերի,
- վերապատրաստումների միջոցով:

Դիտարկումները ցույց են տվել, որ առանձնակի արդյունավետություն ունեն համացանցով իրականացված ֆակուլտետի մասին պատմող կարճ հոլովակները, վարպետաց դասերը, քննարկումները և ուսուցչական անձնակազմի հետ հանդիպումները վերապատրաստման դասընթացների ընթացքում:

Հեռացման հիմնական պատճառները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ ֆինանսական խնդիրներ, արտերկիր մեկնելը, արտերկրում ուսումը շարունակելու կամ վերապատրաստվելու ցանկությունը, անբավարար առաջադիմություն:

Վերականգնման հիմնական պատճառը, ուսումը շարունակելու ցանկություն:

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		7
Մագիստրոս		5
Հեռակա		3
Ընդհանուր		15
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
2	Հոդված	2

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության՝ ՀՊՄՀ քաղաքականությանը համապատասխան հստակ մոտեցումներ :
Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը շարունակվում է համալրվել ոլորտում առանձնակի հեղինակություն վայելող մասնագետներով:
Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:
Դասախոսական կազմի մասնագիտական որակները և փաստացի աշխատանքը պարբերաբար քննարկվել և վերլուծության են ենթարկվել ամբիոններում: Անհրաժեշտության դեպքում քննարկումներին մասնակցել է նաև ֆակուլտետի դեկանը:
Հաշվետու տարում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում :
Հաշվետու տարում ֆակուլտետի կազմում գործող ամբիոնների դասախոսները իրականացրել են անմիջականորեն ամբիոնների նախաձեռնությամբ և/կամ ամբիոնների անդամների անմիջական մասնակցությամբ մի շարք միջոցառումներ: Միջոցառումները ներառել են՝ վերապատրաստման դասընթացներ /թվով 7/, միջբուհական գիտապրակտիկ կոնֆերանս (Արտասահմանյան գրականության ամբիոն) հանրապետական կոնֆերանս (ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն) միջամբիոնական կլոր սեղաններ, սեմինարներ/ թվով 10/,ինչպես նաև սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվել են օտար լեզուների դասավանդմանը, լեզվաբանությանը, գրականագիտությանն առնչվող խնդիրների լայն տիրույթ, մասնավորապես՝ դասավանդման հնարներ, նոր մոտեցումներ, միջոցներ, տարբեր մակարդակների լեզվական երևույթներ և այլն/ թվով 48/ :

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:			
Ֆակուլտետի կազմում գործող ամբիոնները կազմակերպել են սեմինարներ՝ ամբիոնի նիստերին կից, ժողովածուի հրատարակում (արտասահմանյան գրականության ամբիոն) և այլն: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել են՝ Կոնֆերանս -10 Հոդված- 22 Ցիտվող-8			
Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:			
ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020թ.. հրապարակումների թիվ
1.	Энциклопедия: Л.Н. Толстой и его современники, М.: НИЦ ИНФРА-М.		
2.	Международная научно-практическая конференция «Вопросы теории и практики преподавания русского языка как иностранного»		
3.	СПб Центр Системного Анализа. Предикатвный характер научных исследований и практика их реализации в условиях глобального кризиса в экономике и обществе. Сборник научных статей по итогам международной научно-практической конференции. Изд-во СПбГЭУ, 21-22 августа 2020.		
4.	Волжский Универ. им. Татищева.		
5.	“Поэтика комического в мировой литературе”. Международная конференция. XXXII Пуришевские чтения. 8-11 апр. 2020. Кафедра всемирной литературы Института филологии МПГУ.		
6.	«Современная коммуникативистика: наука – практика – специальность» // Материалы Всероссийской научнопрактической конференции с международным участием. М.: Ред-изд.дом Российского нового университета, 2020.		
7.	Идеи и идеалы, 2020, N 1.		
8.	Визуальная теология, 2020, 1 (3)		
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020թ.հրապարակումների թիվ
1.	Social and Economic Aspects of Education in Modern Society		
2.	iScience, Актуальные научные исследования в современном мире, (Сборник научных трудов)		
3.	The scientific heritage		
4.	National science journal 2020, 25/52, т.1		
5.	Proceedings of the XXI International Scientific and Practical Conference		
6.	Main issues of Pedagogy and Psychology		
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2020թ. հրապարակումների թիվ
1.	Պատմաբանասիրական հանդես 2020.		

2.	Республиканская научно-практическая конференция «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»		
3.	Հայագիտական հանդես		
4.	ՈՍԿԵ ԴԻՎԱՆ Հեքիաթագիտական հանդես		
5.	Edcamp Armenia 2020		

Ֆակուլտետում հետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված քայլերը հիմնականում գտնվում են ընթացքի մեջ. արտերկրում տպագրվող գիտական հանդեսներին զուգահեռ՝ ամբիոնները (ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի, արտասահմանյան գրականության) սկսել են բանակցությունները արտերկրում գործող գիտական կենտրոնների, հիմնադրամների հետ համատեղ գիտահետազոտական գործունեություն ծավալելու նպատակով: Ամբիոնների անդամները 6 գիտական ժողովածուների խմբագրական խորհուրդների անդամներ են:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության հիմնական արդյունքները, որոնք ներկայացվել են ներամբիոնական սեմինարների ընթացքում, ամբիոնների երաշխավորությամբ հիմնականում կիրառվել են բուն մանկավարժական պրակտիկայում և բուն դասապրոցեսում. Դիցուք՝ քննարկում և դեբատներ՝ կամընտրական դասընթացում (ռոմնագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոն), էլ. Հարթակների կիրառելիություն (գրավոր խոսքի զարգացմանն ուղղված առցանց հարթակի կիրառում, ֆիլմերի դիտում-քննարկումներ դասապրոցեսում, սոցիալական գովազդային տեսահոլովակների կիրառում՝ սոցիալական իրազեկվածության մակարդակի բարձրացման և նմանատիպ հաղորդակցական կաղապարների հետ ծանոթանալու նպատակով և այլն:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ֆակուլտետում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը:

Ֆակուլտետի տրամադրության տակ եղած լսարանային ֆոնդը հիմնականում բավարարում է առկա պահանջարկը: Ամբիոնները նաև համալրվել են համապատասխան մասնագիտական գրականությամբ՝ ՀՊՄՀ ֆինանսավորման (լեզվաբանական և գրականագիտական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, գեղարվեստական գրականության և թեստային շտեմարաններ և այլն) և «Ռոսսոնտրուդնիչեստվո» կազմակերպության (մեթոդաբանական դասագրքեր, ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասագրքեր) շնորհիվ: ՀՊՄՀ ֆինանսավորմամբ համալրվել է նաև լսարանների և ամբիոնների տեխնիկական հագեցածությունը՝ պրոյեկտորներ և դյուրակիր համակարգիչներ:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:

Հաշվետու տարում իրականացվել են խորհրդատվական հանդիպումներ, քննարկումներ, վարպետաց դասեր Երևան քաղաքի մի շարք դպրոցներում Արդեն իսկ ձեռք են բերվել պայմանավորվածություններ հաջողված փարձը տարածել նաև մարզերում (օտար լեզուների ուսուցման ամբիոն):

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Հաշվետու տարում արդեն իսկ հաստատված կապերից զատ՝ ամբիոնները նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերել ընդլայնելու միջազգային համագործակցությունը՝ ԱՄՆ, եվրոպական, ռուսական և որոշ արևելյան (ԱՄԷ) երկրների հաստատությունների և/կամ դրանց ստորաբաժանումների հետ: Բանակցությունները հիմնականում տարվել են՝ համատեղ պարբերականներ հիմնելու, համատեղ հետազոտություններ իրականացնելու, համատեղ դասընթացներ և/կամ վեբինարներ կազմեկրպելու նպատակով նպատակով: Դեռևս ամբողջական չեն նախաձեռնությունների փաստացի իրականացումը՝ համատեղ հետազոտությունների, համատեղ

դասընթացների հարցում, իսկ արտերկրից հրավիրվող դասավանդողների, համատեղ և/կամ առցանց դասընթացների և վեբինարների իրականացումը դեռևս չի կրում ցանկալի պարբերական բնույթը:
Ֆակուլտետի կազմում գործող ամբիոնները համագործակցում են արտերկրյա հետևյալ կառույցների հետ՝ British Council, «Санкт-Петербургский институт проектного менеджмента», Լիսաբոնի տեխնիկական համալսարան, Ռուսաստանի Դաշնային գործակալության, Սալեռնոյի համալսարան, "Государственный институт русского языка им. А.С.Пушкина", Московский государственный университет им. М.В.Ломоносова, Օուլուի համալսարան, Кафедра русского языка Инженерной академии Российского университета дружбы народов (Москва, РФ), Գյոթե-ինստիտուտ, Московский государственный лингвистический университет, Российский государственный педагогический университет им. А. И. Герцена, Южночешский университет в Ческе-Будеёвице, Վալլադոլիդի համալսարան:

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քայլերը հիմնականում շարունակել են նախորդ ժամանակահատվածի ձեռքեբրումները՝ հատկապես կապերը Բրիտանական Խորհրդի, ԱՄՆ դեսպանության, Գյոթե ինստիտուտի հայկական ներկայացուցչության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան, Արգենտինայի դեսպանատան, ինպես նաև Россотрудничество կազմակերպության հետ:

Օտար լեզուների ֆակուլտետում շարունակվել է օտարերկրյա քաղաքացիների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելությունը երկարաժամկետ բակալավրի նախապատրաստական գերմաներենի դասընթացն ավարտած ունկնդիների ուսումնառությունը բակալավր կրթական ծրագրով կազմակերպելու և բակալավրի նախապատրաստական գերմաներենի և անգլերենի երկարաժամկետ դասընթացներին մասնակցելու համար:

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ֆակուլտետի աշխատանքներն իր կառույցի որակի ապահովման ուղղությամբ:

Ֆակուլտետի որակի ապահովումը ներառում է որակի ապահովման հանձնաժողովը, որը գլխավորում է ֆակուլտետի որակի պատասանատուն՝ բ.գ.թ., դոցենտ Ի. Սարկիսյանը, անդամները՝ ամբիոնների որակի պատասանատուները՝ Ք. Բեջանյանը, բ.գ.թ., մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանը, մ.գ.թ. Տ. Գևորգյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Վահանյանը: Բոլոր որակի պատասանատուները հաշվետու տարում ցուցաբերել են բարձր պատասխանատվություն և գործընթացում շահագրգիռ մասնակցություն՝ համագործակցելով ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ: Քննարկված հարցերի ոլորտը ներառել է.
- էլ. ուսուցումը և դրա արդյունավետությունը,
- էլ. հարթակում իրականացվող աշխատանքների տեսակը, ծավակը, գնահատվող առաջադրանքների քանակը
- ուսումնական ծրագրերում առկա առարկաների ճշգրտումն ու վերանայումը,
- որակի մշտադիտարկման մեխանիզմները՝ ըստ կրթական գործընթացի բաղադրիչների և սահմանված ցուցիչների,
-դասապրոցեսի կազմակերպման արդյունավետությանը նպաստող գործիքակազմը և այլն:

Ֆակուլտետի ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացներին հաշվետու տարում:

Որակի ապահովման գործընթացում ներքին և արտաքին շահառուների ներգրավվածությունն ապահովվում է ուսանողների մասնակցությամբ և ամբիոններում դասախոսների կողմից ներկայացվող առաջարկությունների միջոցով: Միևնույն ժամանակ, որոշ միջոցառումների ընթացքում (հատկապես՝ վերապատրաստում, սեմինարներ) առարկայական ուսուցիչների շրջանում հարցում-քննարկումները և մանկավարժական պրակտիկան նույնպես բացահայտում են որոշակի որակական առաջնայնություններ, որոնք անհրաժեշտաբար ներառման ենթակա են ֆակուլտետի կողմից իրականացվող որակի ապահովման, վերահսկողության և հնարավոր բարեփոխումների տիրույթում:

Օտար լեզուների ֆակուլտետի ամբիոններն են.

Աբստրակտամանական գրականության ամբիոն

Ռուսաց լեզվի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Օտար լեզուների ուսուցման ամբիոն

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոն